# ԹԵՄԱ 6

# ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

## ԴԱՍ 6.9. Քաղաքների տիպերը

**1.** Քաղաքները յուրաքանչյուր տարածքի կազմակերպման յուրահատուկ տնտեսական, ֆինանսական, մշակութային, գիտակրթական գլխավոր կենտրոններ են, տրանսպորտային ուղիների հանգուցակետեր:

Շատ երկրներում քաղաքներ են համարվում բոլոր վարչական կենտրոնները՝ անկախ բնակչության թվից: Մյուս երկրներում մեծ կարևորություն է տրվում բնակչության զբաղվածության կառուցվածքին, այսինքն՝ բնակչության քանի տոկոսն է զբաղված, այսպես կոչված, «քաղաքային» ճյուղերում, օրինակ՝ արդյունաբերության մեջ, տրանսպորտում, սպասարկման ոլորտում:

**2.** Կարևոր նշանակություն ունեն նաև քաղաքների ծագումնաբանությունը, հատակագծային կառուցվածքը. բնակելի թաղամասեր, արտադրական, մշակութային, գիտակրթական, կանաչ գոտիներ և այլն: Քաղաքների հատակագծերի վրա ազդում են նաև բնական պայմանները՝ ռելիեֆ, միկրոկլիմա, գետերի երկայնքով ձգվածություն և այլն: